ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ XIX ԴԱՐԻ ՀԱՅ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՄՏՔՈՒՄ

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ազգային առաջադիմության, մտավոր և քաղաքական զարգացման, նախկին մտածելակերպի կաղապարներից նրա ազատագրման, ինչպես նաև մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության հարցերը միշտ գրավել են լուսավորյալ ու առաջադեմ մտածողների ուշադրությունը։ Նրանք բոլորն էլ ձգտել են մարդկանց ազատել սնոտիապաշտությունից ու նախապաշարումներից, վերացնել նախորդ մտածելակերպի սահմանափակությունները և որոնել են ուղիներ՝ անհատի աշխատանքային ու մտավոր զարգացումն ապահովելու համար։ Այս հարցերին անդրադարձել են XIX դ. առաջադեմ մտածողներ Խ. Արովյանը, Ստ. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Մ. Մամուրյանը, Բաֆֆին, Գր. Արծրունին և գրական-հասարակական մտքի ուրիշ շատ ներկայացուցիչներ։ Սկսելով լուսավորության ու կրթության քարոզից, մերկացնելով ազգային նախապաշարմունքները, ժողովրդականացնելով գիտության հայտնագործությունները, պայքարելով աշխարհաբարով գրված ու ժողովրդի շահերը պաշտպանող գրականության համար, նրանք միաժամանակ առաջ քաշեցին հասարակական բոլոր հիմնարկությունների՝ եկեղեցու, դպրոցի, ազգային ավանդույթների. լեզվի վերանորոգման հարցը, իսկ ոմանք էլ, հետզհետե անցնելով հեղափոխական դեմոկրատիզմի դիրքերը, դրեցին ժողովրդի վիճակի արմատական վերափոխման, ճորտատիրական կարգերի բռնի ոչնչացման պահանջը։

Այս առումով արժեքավոր են հատկապես ազգային լուսավորության, դպրոցական կրթության ու դաստիարակության, մայրենի լեզվի պահպանման ու զարգացման մասին Ստեփանոս Նազարյանի հայացքները։ Նազարյանը համոզված էր, որ յուրաքանչյուր ժողովրդի լուսավորությունը և ազգային առաջադիմությունը պետք է սկսել նրա մայրենի լեզվի զարգացումից, որովհետև յուրաքանչյուր ժողովուրդ մարդկային անհատի նվաճումները ամենից ավելի դյուրին ու արագ յուրացնում է մայրենի լեզվով։ Այս դիրքերից ելնելով, Ստ. Նազարյանը առաջարկում էր հայկական հասարակական-տնտեսական կյանքի վերանորոգումը սկսել դպրոցից։ Ժամանակի հայկական դպրոցները չէին գոհացնում նրան, որովհետև այդ դպրոցներում կրթությունը սահմանափակվում էր առավելապես առանձին մասնագիտական առարկաներով, որի հետևանքով երեխաների մեջ արմատավորվում էր ավելի շուտ գործամոլական, քան լայն քաղաքացիական-ազգային հայացքը։ Բացի դրանից, Ստ. Նազարյանը այդ դպրոցները ազգային չէր համարում, որովհետև այնտեղ դիտելիքները ավանդվում էին գրաբարով, որ, վերջին հաշվով, սահմանափակում էր մանուկների՝ դրանք յուրացնելու ճանապարհը։ «Հայկական կյանքի վերանորոգությունը,—գրում է Նազարյանը,—պիտի սկսանի ժողովրդական դպրոցից, որ արմատն է ամենայն ազգային լուսավորության, ամենայն ազգային առաջադիմության»[1]։

Հակադրվելով գոյություն ունեցող դպրոցական համակարգին, Ստ. Նազարյանը առաջ էր քաշում ժողովրդական դպրոցներ ստեղծելու հարցը։ Նա այն համոզմանն էր, որ ծեծի վրա հիմնված դաստիարակության, սոսկ սերտումով տրվող «միջնադարյան» կրթության պայմաններում աշակերտները

1 Մ. Նազարյան, Երկեր, Թիֆլիս, 1913, հ. 1, էջ 288։

չեն կարող ստանալ «բազմամասնյա» գիտելիքներ։ Նազարյանը կարևոր էր համարում հատկապես բնագիտական առարկաների դասավանդումը։ Նա կարծում էր, որ բնագիտությունը «ակամա և անզգալի կերպով զրավում է ամենայն միտք։ Ներկայիս խավարը լուսավորել, այս է ահա բնագիտության խորհուրդը»[2]։

Նազարյանը պահանջում էր բոլոր տիպի դպրոցներում պարտադիր մտցնել մայրենի լեզվի ու բնական գիտությունների ուսուցումը։ Առանց դրանց նա աներևակայելի էր համարում բազմակողմանի կրթությունը և մարդու համընդհանուր զարգացումը։ Նա մեծ կարևորություն էր տալիս նաև հայկական դպրոցներում դասական լեզուների ուսուցմանը, որի միջոցով հայերը կկարողանան հաղորդակից լինել համաշխարհային քաղաքակրթության նվաճումներին։

Հրապարակախոսի համոզմամբ հայերի ազգային ու ժողովրդական լուսավորության շավիղն ու ընթացքը այլ պետք է լինի, որովհետև նրան խիստ անհրաժեշտ են տեսական ու գործնական գիտելիքներ. «Մեզ հայերիս, մեր բազմապահանջ ժամանակներում հերիք չէ մի լոկ գրագիտություն. մեզ և մեր մանուկներին հարկավոր է գիտություն, գիտություն բազմամսյա (բազմամասնյա), գիտություն տեսական և գործնական»[3]։ Նա պահանջում էր հայկական նոր բացվող դպրոցներում ուսուցումն այնպես կազմակերպել, որ վերջ դրվեր գիտության ու դաստիարակության ասիական եղանակներին, և արմատավորվեին եվրոպական դպրոցի առաջադիմական ձևերն ու եղանակները։ Նազարյանը խոստովանում է, որ իր ամսագրի նպատակն է եղել «զարթուցանել քնից մեր թմրած ժողովուրդը, բարձրացնել նորան և ցուցանել այն ճանապարհը, որ պիտո էր գնալ, այսինքն, թողնելով վերջապես ասիական ատելի խավարը և ոտք կոխել այն սահմանի վերա, ուր փայլում է եվրոպական լուսավորությունը»[4]։

Չնայած Ստ. Նազարյանը անհրաժեշտ էր համարում նաև կրոնի դասավանդումը բոլոր տիպի դպրոցներում, այնուամենայնիվ, դպրության ու լուսավորության վերաբերյալ նրա կազմած ծրագիրը ինքնաբերաբար տանում էր դպրոցը եկեղեցուց անջատելուն։

Նազարյանի գրչակից Միքայել Նալբանդյանի կարծիքով լուսավորության գործը պահանջում է հետևել Աբովյանի օրինակին, «պատժել և պատուհասել բերանով և գրչով ազգի պակասությունքը, հրատարակել նորանց այնքան, մինչև որ ազգը տեսանելով յուր վերայի կեղտը, զզվի, գարշի և խնամ տանե լվանալու և մաքրելու յուր անձը, որպեսզի արժանի լինի լուսափայլ դեմքով մասնակից լինել եվրոպական մարդկության բարիքին»[5]։

Նալբանդյանը լուսավորության և առաջադիմության գլխավոր գործոնը համարում էր գիտությունն ու նոր աշխարհաբար լեզուն տարածելը։ Նա քննադատում է սխոլաստիկական բովանդակությամբ և միստիկական ոգով տառապող ժամանակի գրականությունը. «Այսպես ահա մեր դպրության մեջ չկա ոչինչ նորություն, միևնույն բաները կրկնվում են ամեն օր... Տխուր մատենագրություն։ Եվ ինչպե՞ս կարելի է պահանջել, որ ժողովուրդը ընթացք տա այսպիսի մատենագրության, ընդունի նորան սիրով, սեղանով...

Եթե պատվելի հեղինակների ընթացքը այսպես շարունակվի միշտ, ապա և հայերի հոգեղեն կյանքը կը շարունակվի միօրինակ, ինչպես եղել է և կա և կը մնա այնպես, այսինքն, հասարակ ժողովուրդը զուրկ լուսավորությունից, իսկ բան ուսանել կամեցողը կարոտ օտարների շահերին»[6]։ Ստեղծված վի-

---

2 Հյուսիսափայլ, 1858, № 2, էջ 135։

3 Հյուսիսափայլ, 1861, № 3, էջ 253։

4 Հյուսիսափայլ, 1858, № 4, էջ 335։

5 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ) հ. 1. Երևան, 1945, էջ 315։

6 ԵԼԺ, հ. 2 Երևան, 1947 էջ 64, 65։

ճակից դուրս գալու ելքը Նալբանդյանը տեսնում էր մատենագրական նոր լեզու ստեղծելու, հրատարակված գրականության բովանդակությունը ժողովրդին մատչելի դարձնելու, սեփական դպրոցների վիճակը բարելավելու և ուսուցման ու լուսավորության տարածման գործը նոր եղանակներով վարելու մեջ. «Մինչև նոր լեզուն չլինի առհասարակ մատենագիտական լեզու, մինչև գրվածների իմաստը ըմբռնելի և հասկանալի չլինի ժողովրդին, մինչև ազգը խոհեմ ճանապարհներով հոդս չառնե սեփական ազգային դպրոցների մասին և, վերջապես, որ ամենից հարկավորն է, մինչև մեր պատվելի հեղինակները դպրոցական փառքը հետ դնելով ազգի համար չաշխատեին առողջամիտ կերպով, և մյուս կողմից ազգի կարողքը օգնություն չառնեին նորանց, սո՛ւտ է ամենայն լուսավորություն. և առանց ամենայն գործունեության սպասելը մի լուսավորող ժամանակի ոչ այլ ինչ է, եթե ո՛չ անձնախաբեություն»[7]։

Հակառակ այն իշխող գրականությանը, որը միշտ ձգտել է քողարկել «ազգային պակասությունները», նրա ստվերոտ կողմերը և այդպիսով ազգը պահել «խավարի թագավորության» մեջ, Նալբանդյանը նոր գրականության խնդիրը համարում էր ազգի մութ կողմերը, թերությունները բացահայտելը, որպեսզի ազգը հնարավորություն ունենա քննության առնել իր տխուր անցյալը և մտածի տխուր ներկան բարվոքելու մասին։ «Առանց որևիցե փոքրագի կասկածավորության,—գրում է նա,—պիտո է հանդես հանել ազգի առաջև նորա խավար կողմերը»[8]։ Միաժամանակ նա գտնում էր, որ անհնար է առանց ժողովրդի վիճակի արմատական վերափոխման, առանց ճորտատիրական բռնապետական կարգերի ոչնչացման լուսավորության իրականացումը. «Լուսավորությունը այնքան հիմնավոր է, որքան աղատ է և անկախ. ստրկության մեջ չէ կարող լուսավորության ծիլը կանաչել»[9]։ Սակայն տեսնելով ներկա ժամանակում տիրող բռնապետական կարգերի վերացման անհնարինությունը և գտնելով, որ «լուսավորության տաճարը» պիտի կառուցվի ամբողջ ազգի ձեռքով, նա անհրաժեշտ էր համարում նախ և առաջ ժողովրդի մեջ սեր պատվաստել դեպի լուսավորությունը. «Մեր ցանկությունն է, որ կարողանանք ժողովրդին մոտեցնել փոքր-ինչ դպրության հետ, նյութ և սնունդ դնել հայկական չոր ու ցամաք դպրության մեջ»[10]։

Ազգային առաջադիմության ու լուսավորության հարցերով մտահոգված էին և՛ արևելահայ, և՛ արևմտահայ առաջադեմ մտավորականության ներկայացուցիչները։ Մ. Մամուրյանն առաջիններից մեկն էր, որը առաջ քաշեց կրթական մեթոդի ու կենցաղավարության հին ձևերի փոփոխման և ազգային զարգացմանը լավ ու լուսավոր ուղղություն տալու հարցը։ Նա հայ ժողովրդի առաջադիմության և հին ֆեոդալական ապրելակերպի վերափոխման կարևոր գործոններից մեկը համարեց ազգային կրթության եղանակի արմատական վերանորոգումը. «Արմատական նորոգումն, ըստ իս՝ իր կրթության եղանակի նորոգումն է, որ դեռ միջնադարյան կհամարվի։ Դեռ կտիրեն իր դպրոցներուն մեջ վարդապետին ասածն՝ ու գավազանը, դեռ կրթության հաղորդ գտնվելու գործի չունի, դեռ լեզու չունի կանոնավոր, դեռ նոր գրականություն չունի և դասագիրք»[11]։

Ազգային լուսավորության և առաջադիմության վերաբերյալ հայ վաթսունականների առաջ քաշած առաջադիմական գաղափարները ջերմ պաշտպանություն գտան ու նոր զարգացում ստացան 70—80-ական թթ. գրական ու հասարակական մտքի առաջավոր ներկայացուցիչների և մասնավորապես լիբերալ բուրժուազիայի հրապարակախոս Գրիգոր Արծրունու գործերում։ Իրեն Մ. Նալբանդյանի և Ստ. Նազարյանի հետևորդ հայտարարող հրապարակա-

---

7 Նույն տեղում, էջ 66։

8 Նույն տեղում, հ. 1, էջ 279։

9 Նույն տեղում, հ. 2, էջ 264։

10 Նույն տեղում, հ. 4, Երևան, 1949, էջ 89։

11 Մ. Մամուրյան, Երկեր, Երևան, 1966, էջ 246։

խոսը, կռահելով ժամանակի կարևոր ու անհետաձգելի խնդիրները, ամբողջովին նվիրվեց հայ հասարակական կյանքի առաջընթացի, հայ ժողովրդի մտավոր ու քաղաքական դաստիարակության գործին ու իր արժանի ավանդը ներդրեց հայ ազգի բարոյական ու հոգևոր զարգացման մեջ։ Ընդառաջելով ժամանակի պահանջին, Գր. Արծրունին բաղմակողմանիորեն քննեց ազգի զարգացման հարցերը։

Իր գործունեության հենց սկզբից նա առաջ քաշեց նկեղեցու, դպրոցի, ազգային ավանդույթների, լեզվի վերանորոգման հարցը։ Դրանով նա ցույց տվեց, որ իր նպատակը հասարակության արմատական վերակառուցումն է։ Հասարակական կյանքն արմատապես փոխելու, նրանում վերանորոգումներ կատարելու գործը Արծրունու կարծիքով պետք է սկսել ընտանիքից, որը ոչ թե մի քանի մարդուց բաղկացած միություն է, այլ հասարակության հիմքը կազմող սոցիալական մի օրգանիզմ։ Արծրունու պատկերացմամբ ընտանիքը, որպես մարդկության սկզբնական հասարակական ընկերակցության ձև, կազմավորվում է երկու նպատակով՝ նյութական և բարոյական։ Նյութական կողմը արտահայտվում է կնոջ և տղամարդու նյութական փոխադարձ ապահովության ձգտման, իսկ բարոյականը՝ հասարակության համար առողջ, մտավորապես և ֆիզիկապես զարգացած նոր սերունդ ստեղծելու, տղամարդու և կնոջ բնական զգացմունքների մեջ։ Չկա և չի կարող լինել հասարակություն առանց ընտանիքի, բայց ընտանիքը կարող է լինել լավ կամ վատ կազմակերպված։ Յուրաքանչյուր ազգի կամ ցեղի ընտանեկան կազմակերպության ու նրանում տիրող հոգեբանության ուսումնասիրությունը պարզ պատկերացում է տալիս տվյալ ազգի կամ ցեղի հոգեկան խառնվածքի և բնավորության մասին, որովհետև «...ընտանիքն է հասարակական բոլոր կազմակերպության, նրա կյանքի, նրա բոլոր կենսական պաշտոնակատարությունների սկզբնական տիպը, մի ազգի սկզբնական հասարակական միավորը»[12]։ Սա ընտանիքի՝ որպես սկզբնական ամենահիմնական «ուսումնարանի», հասարակական դերի ճիշտ ըմբռնում էր։

Գր. Արծրունու համոզմամբ, ընտանիքը ներկայացնում է հասարակությանը, կազմում է նրա կորիզը։ Ինչ պակասություններ ու նախապաշարմունքներ գոյություն ունեն ընտանիքում, նույնը կունենա և հասարակությունը։ Եթե ընտանիքում տիրում է ծնողների «բռնավորությունը», ապա այդպիսի ընտանիքից դուրս եկած և հասարակության մեջ գործող անհատը չի կարող գաղափար կազմել ազատ քաղաքացու պարտավորությունների մասին։ Եթե ընտանիքում տիրում է անսանձ կամայականությունը և բացակայում է նրա յուրաքանչյուր անդամի «խելացի պարտաճանաչությունը» և սահմանված չէ կայուն կարգապահություն, ապա հասարակության մեջ էլ կնկատվի պատասխանատվության ու կարգապահության բացակայություն, հետևաբար հասարակությունը բարոյապես և մտավորապես վերանորոգելու համար առաջին հերթին պետք է վերանորոգել ընտանիքը։

Լուսավորչի ցանկությունը հայ ընտանիքը վնասակար նախապաշարմունքներից ազատելն ու նրանում կիրթ հասարակություններին հատուկ խելացի, գիտակցական գաղափարի վրա հիմնված արժանավոր հարաբերություններ ստեղծելն է։ Այս դիրքերից էլ ելնելով նա չէր ընդունում արևելյան՝ այդ թվում հատկապես հայ ընտանիքի կազմավորման սկզբունքն ու դրա հետ կապված հայի բնավորության որոշ թերի կողմերը։ Նա խստորեն դատապարտեց հայոց ընտանիքում տիրող բռնավորական սկզբունքը՝ մարդկանց նախանձոտ, վրեժխնդիր, հալածող, հարստահարող գծերը։ Հայ հասարակության մեջ խելացի, գիտակցական կարգապահության վրա հիմնված ընտանիքների բացակայությունը Գր. Արծրունին բացատրում էր քաղաքակրթության ամենատարրական սկզբունքների բացակայությամբ։

---

12 Մշակ, № 12, I, 1872։

Գր. Արծրունու կարծիքով, ընտանիքի հիմնական նպատակը հասարակության համար դաստիարակված անդամներ պատրաստելն է։ Իսկ այդպիսի պատասխանատու պարտականություն կարող է կատարել միայն այն ընտանիքը, որի հիմքը կազմում է տղամարդու և կնոջ գիտակցական ընկերակցությունը, որտեղ երկու ընկերների միջև իրագործված է փոխադարձ համերաշխության և աշխատանքի հավասար բաժանման սկզբունքը. «Ընտանիքի կոչումն է պատրաստել հասարակության անդամներ։ Ընտանիքի կազմակերպությունից կախված է հասարակության կազմակերպությունը։ Ընտանիքները, որպես հասարակության օրգանական, սկզբնական մասնիկները՝ իրար մեջ գումարված կազմում են հասարակությունը»[13]։

Գր. Արծրունին ատելությամբ էր լցված հայ իրականության մեջ և ընտանիքում տիրող այն հարաբերությունների դեմ, որտեղ կինը վերին աստիճանի նվաստացած է։ Նա չէր կարողանում հաշտվել այն դրվածքի հետ, որ տղամարդը իրավունք ունի տարրական և միջնակարգ կամ նույնիսկ բարձրագույն կրթություն ստանալու, աշխատանքային ինքնուրույնություն ձեռք բերելու, իսկ կինը՝ ոչ։ Կինն ինչո՞ւ պետք է միշտ տնտեսական ու նյութական կախման մեջ գտնվի տղամարդուց։ Ինչո՞ւ պետք է նա հնարավորություն չունենա կրթություն ստանալու կամ մի որևէ արհեստ սովորելու, որպեսզի կարողանա ազատ լինել, իր «սեփական ոտների վրա» կանգնած լինել. «Եթե տղամարդը դարերի ընթացքում՝ ուսումով և անկախ աշխատանքով ազատվել է ստրկությունից և հասել է անկախ դիրքին,—նույնը պետք է անի և կինը։ Կինը այն ժամանակ միայն կհասնի անկախության, երբ իր ուսման միջոցով ձեռք կբերի անկախ դիրք»[14]։ Տնտեսական անկախություն ձեռք բերելու համար պարտադիր չէ, որ կինը անպայման բարձրագույն կրթություն ստանա, այլ որևէ հարմար մասնագիտություն ձեռք բերելով, նա կարող է «անկախ աշխատանքով» ազատվել տղամարդուց ունեցած նյութական կախումից. «Մենք կրկնում ենք, էմանսիպացիան, ազատությունը թե տղամարդու և թե կնոջ համար, ինչ հասարակական դասակարգին էլ պատկանեին նրանք, հիմնվում է անկախ աշխատանքի վրա, իսկ անկախ աշխատանքով ապրելու համար՝ պետք է մի աշխատանք, մի արհեստ, մի փեշակ սովորած լինել»[15]։ Հայ հրապարակախոսը համոզված էր, որ ամեն մի ազգի կնոջ ազատությունը պայմանավորված է ազգային լուսավորությամբ և ամեն մի ազգի լուսավորության աստիճանը որոշելու համար պետք է լուրջ ուշադրություն դարձնել կանանց դրության վրա։ 1868 թ. «Հայկական աշխարհում» տպագրված «Ինչ է կնամարդ» հոդվածում նա գրել է. «Եթե ազգը լուսավորության մեծ աստիճանին չի հասել, այդ ազգի կանայք ազատություն չունեն, թե ընտանեկան, թե հասարակական կյանքի մեջ։ Քանի լուսավորվում է ազգը, այնքան լավանում է կնամարդի դրությունը, այնքան կնամարդը հասկանում է իր մարդկային արժանավորությունը, և մարդիկ հրաժարվում են կոպիտ իրավունքից—նորան ստրկության մեջ պահելու»[16]։

Կնոջ դրությունը հասարակության մեջ բարձրացնելու համար Գր. Արծրունին առաջարկում էր որոշակի կրթություն և դաստիարակություն տալ նրան։ Սակայն ժամանակի հայկական դպրոցներում տիրող վիճակը և ուսուցման ու դաստիարակության հնացած ֆեոդալական եղանակները խանգարում էին դրան։ Հաղթահարվելով ազգային դպրոցներում կրթության ու դաստիարակության իրենց դարն ապրած մեթոդներին, հոդապարակախոսն առաջ քաշեց ուսուցումը եվրոպական ամենաառաջավոր մանկավարժական համակարգերին և ուղղություններին համապատասխան կազմակերպելու հարցը։ Նա բողոքում էր, որ այդ մեթոդների կիրառումը հայկական դպրոցներում հանդի-

---

13 Մշակ, № 28, III, 1890։

14 Մշակ, № 14, II, 1889։

15 Նույն տեղում։

16 Գրիգոր Արծրունի. Աշխատություններ, հ. 1, Թիֆլիս, 1904, էջ 78։

պում է մեծ դժվարությունների, որ ազգային դպրոցի ղեկավարները չեն կարողանում հաշվի առնել ժամանակի պահանջներն ու հետևել եվրոպական առաջադիմությանը. «Մեր ուսումնարաններում մենք չսեփականացրինք մեզ դասատվության եվրոպական մեթոդը, այլ շարունակեցինք հին, անհամ եղանակով դաս տալ,—որովհետև չկարողացանք աշխատել, ըմբռնել ժամանակի պահանջմունքը, չկարողացանք հետևել եվրոպական մտքի առաջադիմությանը»[17]։

Զննելով ժամանակի հայկական դպրոցներում և ուսումնարաններում դասավանդման համակարգն ու ուսման ընթացքը՝ Գր. Արծրունին հանգում է այն եզրակացության, որ այդ համակարգը հնացած է, չի համապատասխանում ժամանակի պահանջներին։ Նա տեսնում էր, որ չնայած աշակերտները երկար տարիներ մնում են ուսումնարաններում և անցնում են քերականություն, ճարտասանություն, թվաբանություն, աշխարհագրություն, պատմություն և այլ առարկաներ, բայց նրանցից ոչ մեկը ի վիճակի չէ որևէ գործնական, կենսական հարցի կատարյալ պատասխան տալու։ Սրանում Գր. Արծրունին մեղավոր էր համարում ոչ միայն դասավանդման մեջ իշխող չոր ու ցամաք հին համակարգը, այլ նաև հնության փեշից պինդ բռնած ու նորարարությունից և վերանորոգությունից վախեցող ուսուցիչներին։ Նրա համոզմամբ, դաստիարակության համակարգը կարիք է զգում ընդհանուր հեղափոխության ու հիմնական վերանորոգության։ Իսկ վերանորոգումը պետք է սկսվի հիմքից՝ տարրական ուսումնարանից, բայց այդ գործը կատարելու համար հարկավոր են գործիչներ, այսինքն՝ գործ կատարող և բանիմաց ուսուցիչներ, որոնց թիվը անցյալ դարի 70-ական թվականներին հայ հասարակության մեջ խիստ սահմանափակ էր։ Ուստի, որպես ժամանակի հրամայական, նա Թիֆլիսի Ներսիսյան դպրոցից պահանջում էր պատրաստել լուսավորյալ ուսուցիչներ։ «Ներսիսյան դպրոցը Թիֆլիսում,—գրում է Արծրունին,—պիտի հասկանա վերջապես, որ նորա նշանակությունն է պատրաստել ժողովրդի համար ուսուցիչներ, այսինքն, կրթյալ քահանաներ և ծխական ուսումնարանների համար վարժապետներ»[18]։ Գր. Արծրունին ցանկանում էր, որ Ներսիսյան դպրոցի շրջանավարտը ստանա այնպիսի ընդհանուր զարգացում, որպեսզի գործնական կյանք մտնելով, քահանա կամ վարժապետ դառնալով, քաղաքի կամ գյուղի բնակչության հետ հաղորդակցվելով՝ կարողանա պիտանի դառնալ նրա ամենօրյա կենսական պահանջներին։

Յուրացրած լինելով եվրոպական լուսավորության արժեքներն ու մեթոդները, լրջորեն շահագրգռված լինելով հայկական դպրոցի ու կրթության առաջընթացով՝ Գր. Արծրունին կտրականապես մերժեց գրաբարի դասավանդումը նոր դպրոցներում։ Մայրենի լեզուն համարելով մարդու բնական օրգաններից մեկը, որը ազգի ցեղային հատկանիշների արտահայտիչն է, Գր. Արծրունին իր հրապարակախոսական գործունեության հենց առաջին տարում դրեց հայկական դպրոցներում մայրենի լեզուն հանգամանորեն ուսումնասիրելու պահանջը։ Մայրենի լեզուն մոռանալը, Գր. Արծրունու համոզմամբ, հավասար է իր բնական միջոցներից (օրգաններից) մեկը կորցնելուն, որը տանում է մարդու բնական զարգացման, անհատական հատկությունների և հասարակական օգտակարության համար նրա ուժի արդյունավետության նվազեցմանը. «Եթե ֆրանսիացին չիմանա ֆրանսիական լեզուն, ռուսը՝ ռուսաց լեզուն, հայը՝ հայոց լեզուն, վրացին՝ վրաց լեզուն, ֆրանսիացին չի լինի կատարյալ ֆրանսիացի, գերմանացին չի լինի կատարյալ գերմանացի, ռուսը՝ կատարյալ ռուս, հայը՝ կատարյալ հայ...»[19]։

Հային հայերեն լեզու չուսուցանելով, ասում էր Արծրունին, փաստորեն նրան զրկում ենք իր անհատական մտավոր և հոգեկան ամբողջ ուժն ու կա-

---

17 Մշակ, № 14, IV, 1872։
18 Մշակ, № 6, II, 1872։
19 Մշակ, № 16, III, 1872։

ղությունները անսահման զարգացնելու հնարավորությունից և մտավոր ստեղծագործության բնագավառում դատապարտում ամլության, անպտղաբերության։ Մանուկին մայրենի լեզուն սովորեցնելով, նրան ավելի ընդունակ ենք դարձնում ապագայում օտար լեզուներ ըմբռնելու և կատարյալ կերպով սովորելու համար։ «Ուրեմն այս է մայրենի լեզվի նշանակությունը,—գրում է Արծրունին,—դպրոցում սովորեցնելով հային հայերեն լեզուն, հիմնելով հայի համար հայոց դպրոցներ, թեկուզ այդ հայը մոռացած լիներ հայերենը, կամ երբեք իմացած չլիներ նրան, և միշտ խոսած լիներ մի օտար լեզվով, մենք օգուտ ենք բերում թե հայ անհատին և թե ամբողջ մարդկությանը»[20]։

Մայրենի լեզուն սովորելու օգուտն Արծրունին տեսնում էր հայ անհատի մտավոր ու հոգեկան կարողությունների անսահման և լիակատար զարգացման հնարավորություն ստանալու, իր ֆիզիոլոգիական առանձնահատկություններին հարմար լեզվով մտավոր ու հոգեկան աշխարհայեցողությունն արտահայտելու, ինչպես նաև ստեղծագործելու ձգտման մեջ։ Մայրենի լեզու ասելով՝ Գր. Արծրունին նկատի ուներ աշխարհաբարը, որը լիովին դուրս չէր եկել գրաբարի կապանքներից։ Նա հետևողականորեն պայքարում էր նոր ձևավորված, բայց հղկման, մշակման ու հարստացման խիստ կարիք զգացող աշխարհաբար լեզուն գրաբարի տիրապետությունից դուրս բերելու համար։

Հասարակական կյանքի առաջընթացը կապելով աճող սերնդի դաստիարակության ու կրթության հետ, Գր. Արծրունին մտածում էր «անդադար» հնազանդությունից նրանց ազատագրելու մասին. «...այս երեխերք ապագա սերունդ պետք է կազմեն, որին մենք պարտական ենք պատրաստել առողջ, խելոք և բացված, և ոչ թե սպանել նրանց անդադար հնազանդության տակ»[21]։ Ֆեոդալական հնազանդությունից աճող սերնդին ազատագրելու գործոններից մեկը նա համարում էր դպրոցներում և ուսումնարաններում բնական գիտությունների դասավանդումը, որը նրա համոզմամբ սովորողներին կազատեր սնոտիապաշտությունից ու նախապաշարմունքներից և կնպաստեր նրանց մեջ աշխարհի ու կյանքի վերաբերյալ ճիշտ աշխարհայացքի ձևավորման գործին։ Նա համոզված էր, որ դպրոցներում բնական գիտությունների դասավանդումը, երեխաներին փոքր հասակից բնության մեջ գործող օրենքների մասին գիտելիքներ տալը նրանց մեջ կառաջացնի միանգամայն մի ուրիշ ուղղություն, մի ուրիշ ոգի, և նրանք աշխարհի ու կյանքի նկատմամբ կունենան ուղիղ հայացք, որն արմատապես կտարբերվի միջնադարյան աշխարհայեցողությունից։

Գր. Արծրունին երեխաների վրա նայում էր որպես հասարակության ապագա քաղաքացիների, որպես ազգի տնտեսական կյանքի, լուսավորության ու կրթության ապագա գործիչների ու կազմակերպիչների և կարևոր նշանակություն էր տալիս նրանց ճիշտ կրթությանն ու դաստիարակությանը։ Այս դիրքերից էլ նա պահանջում էր բոլոր մանուկների պարտադիր ու ձրի ուսուցում. «Քաղաքացու ապագա ձգտողությունները և ջանքը նպատակին հասնելու համար պահանջում ենք ազգի բոլոր մանուկների համար ձրի և պարտադիր դաստիարակությունը (դաստատվությունը)»[22]։ Նա անմիջական կապ էր տեսնում միջնակարգ և բարձրագույն կրթության միջև։ Հասարակական կրթության զարգացման և առաջադիմության խթանիչ ուժը համարում էր տարրական կրթությունը. «Սկզբնական ժողովրդական կրթությունը հասարակական կրթության հիմն է, սկզբնական կրթություն ստանալուց հետո մարդը ընտրում է իր համար մի կոչում և այս նպատակով դառնում է դեպի մասնավոր ուսումնարանները, դեպի համալսարանները, բազմարհեստական ուսումնարանները և այլն»[23]։

---

20 Մշակ, № 161, IX, 1882։

21 Գրիգոր Արծրունի, նշվ. աշխ., էջ 8։

22 Նույն տեղում, էջ 297։

23 Նույն տեղում, էջ 297։

Որպես լիբերալ գաղափարախոս՝ Գր. Արծրունին մտահոգված էր ազգի առաջընթացով և ցանկանում էր, որպեսզի կրթություն ստացած նրա բոլոր ներկայացուցիչներն ակտիվորեն մասնակցեն ֆեոդալական խավարամտության ու նախապաշարմունքների դեմ տարվող պայքարին և իրենց գիտելիքներն ու կարողությունները ներդնեն ազգի բարոյական ու հոգևոր վերելքի պատվաբեր գործին։ Նա քննադատում է բարձրագույն կրթություն ստացած բոլոր այն մտավորականներին և հատկապես երիտասարդներին, որոնք հանդես գալով լուսավորության անունից, իրենց պարտականությունները ազգի հանդեպ չեն կատարում։ Ըստ նրա, ապագա սերունդը նրանց չի ների ազգի նկատմամբ ցուցաբերած անտարբերության համար։ «Կգա ժամանակ, երբ նոքա, որոնք պարտավորություններ ունին, բայց չեն կատարել այդ պարտավորությունները, կենթարկվին ապագա սերունդի հասարակական դատարանին»[24]։

Ազգային առաջադիմության և լուսավորության համար պայքարող հրապարակախոսը չէր կարող անտարբեր մնալ անընդհատ անարդարություններ ծնող ժամանակի հասարակական հարաբերությունների նկատմամբ։ Նա դժգոհություն է հայտնում այն բանի համար, որ հասարակության ազնվական դասակարգը կարող է օրինավոր կրթություն ստանալ, լուսավորվել, իսկ մյուս դասակարգերը զրկված են նման հնարավորությունից. «Ցանկալի է, որ ուսումը, կրթությունը, որքան հնար է, հավասարաչափ կերպով տարածվի բոլոր դասակարգերի մեջ, մատակարարվի հասարակության բոլոր անդամներին առանց բացառության»[25]։

Այդ սկզբունքի վրա հենվելով էր, որ Գր. Արծրունին մտածում էր նաև արատավոր երեխաների՝ կույրերի, համրերի ու խուլերի կրթության մասին։ Նա առաջարկում էր նրանց համար բացել նոր դպրոցներ, ստեղծել ուսման առանձին համակարգեր և մշակել հատուկ մեթոդներ։

Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում վերանորոգումների լայնածավալ ծրագիր առաջարկող հրապարակախոսը չէր կարող կանգ չառնել թատրոնի նշանակության ու կատարելագործման անհրաժեշտության հարցերի վրա։ «Մշակի» հրատարակության երկրորդ տարում գրած «Ի՞նչ ենք պահանջում թատրոնից» առաջնորդողով նա շարադրեց թատրոնի վերաբերյալ իր հիմնական պահանջներն ու սկզբունքները, որոնց և հավատարիմ մնաց հետագա գործունեության ողջ ընթացքում։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժողովրդի մեծ մասը կարդալ չիմանալու պատճառով ընթերցանությամբ չի զբաղվում, նա թատրոնի խնդիրներից մեկը տեսնում էր ժողովրդական լայն զանգվածներին կարդալ սովորեցնելու, մտավոր կյանքին ընտելացնելու մեջ։ Ըստ նրա, տպված խոսքը հասկանալու, քննելու և մտավոր օգուտ ստանալու համար անհրաժեշտ է կրթության ու մտավոր զարգացման մի որոշակի աստիճան, որ չունի հայ ժողովրդի մեծ մասը։ Դրա համար միտքը պետք է այնպես հաղորդել նրան, որ նա կամ իր աչքերով տեսնի, կամ իր ականջներով լսի, այսինքն, անհրաժեշտ է ազդել նրա զգայարանների վրա. «Այդ տեսակ անձերի մեջ, որոնք ժողովրդի մեջ մաս են կազմում ամեն տեղ, երկու միջոց կա մտավոր կյանքը զարթեցնելու, այն է՝ իրանց մայրենի լեզվով, իրանց համար հասկանալի լեզվով մի կողմից հասարակական դասեր անել, մյուս կողմից թատրոնական ներկայացումներ տալ»[26]։ Նա թատրոնից պահանջում էր շատ զգույշ լինել և ժողովրդի անկիրթ մասին չառաջարկել նրա հեշտասիրության զգացմունքն ու վատ կրքերը հրահրող մտքեր ու տեսարաններ, այլ առողջ, մարդկային զգացմունքների ու հասարակական երևույթների խորը կերպով քննված գաղափարներ։ Նրա համոզմամբ, թատրոնն

---

24 Մշակ, № 1, 1872։
25 Մշակ, № 125, IX, 1883։
26 Մշակ, № 3, I, 1873։

ու հասարակական դասախոսությունները անկիրթ ժողովրդի մեջ նույն գերն են խաղում, ինչ տարրական ուսումնարանները, դրա համար էլ նա առաջարկում էր միշտ զգույշ լինել «...մտածելով, որ թատրոնը և հասարակական դասախոսությունը դառնում են տարրական ուսումնարան այն մարդիկների համար, որոնք ոչ ուսումնարանում են եղել, ոչ կարդալ սովոր են...»[27]։

Տեսնելով աշխատավոր ժողովրդի նկատմամբ հարուստ դասի անտարբերությունն ու արհամարհական վերաբերմունքը՝ հրապարակախոսը թատրոնի և հասարակական դասախոսությունների խնդիրներից մեկն էլ համարում էր նրանց միմյանց կյանքին ծանոթացնելը, հույս ունենալով, որ ունևոր դասը ծանոթանալով ստորին խավերի կյանքի պայմաններին, կհասկանա հայրենակիցների տնտեսական ու հոգևոր ամենաանհրաժեշտ պահանջները և կսկսի հոգ տանել այդ մասին։ «Մեր կարծիքով,—գրում է Արծրունին,—մեր բեմական արհեստի պաշտոնը պիտի լինի՝ այնպիսի գրվածներ մեզ ներկայացնել, որոնք մի կողմից ծանոթացնեին ստորին դասը մեր հասարակության մյուս դասերի հետ և մյուս կողմից, որոնք ծանոթացնեին մեր հարուստ դասը ստորին դասի դրության, վիճակի և բնավորության հետ»[28]։

Գր. Արծրունին հայոց թատրոնից պահանջում էր առաջնորդվել բանականության, գիտակցության ուժով և ունենալ մի համակարգված ուղղություն Նրա կարծիքով, ազգային պատմական պիեսները ժողովրդի վրա կարող են ներգործել միայն արտաքին երևույթով, իսկ օտար պատմական պիեսները ոչ մի ազդեցություն չեն կարող ունենալ, որովհետև նրանց հասկանալու համար պահանջվում է բարձր կրթություն և պատմության քիչ թե շատ իմացություն։ Ուստի նա առաջարկում էր այնպիսի երկերի բեմադրությունը, որոնք կրթողական մեծ ազդեցություն կարող են ունենալ հանդիսատեսների զգացմունքների, կրքերի վրա և որոնց բովանդակությունը «ընդհանուր մարդկային» է. «Մեր կարծիքով երկու տեսակ պիեսները միայն կարող են մեր ժողովրդի համար այս բոպեիս կրթողական նշանակություն ունենալ՝ մի կողմից ժողովրդական կյանքից առնված պիեսները, և մյուս կողմից թե ինքնուրույն և թե թարգմանական այնպիսի գրվածները, որոնց նյութը ընդհանուր մարդկային է, որի բովանդակությունը հիմնվում է ընդհանուր մարդկային, ուրեմն ամեն ազգի հասարակության մատչելի զգացմունքների, կրքերի, արժանավորությունների և պակասությունների վերա...»[29]։

Թատրոնի և հասարակական դասախոսությունների հետ Գր. Արծրունին ժողովրդի լուսավորության ու առաջադիմության գործում մեծ տեղ էր հատկացնում գրականությանը։ «Գրականություն չկա» հոդվածում ըստ արժանվույն գնահատելով հայ հին գրականությունը, նա այն միտքն է հայտնում, որ այն մեզ ծանոթացնում է հին հայերի կյանքին, ճիշտ տեղեկություն հայտնում նրանց մտավոր ու բարոյական զարգացման աստիճանի մասին՝ քրիստոնեության առաջին դարերից սկսած։ Սակայն այդ գրականությունը, Գր. Արծրունու համոզմամբ, չնայած ուներ հարուստ բովանդակություն ու հատուկ ուղղություն, չէր կարող առաջ քաշել այնպիսի գաղափարներ, որոնք կարողանային նորոգել հայ ազգի վարք ու բարքը և նրա կյանքին մի նոր, օգտավետ ուղղություն տալ։ «Հին գրականությունը,—գրում է նա,—մեզ ցույց է տալիս թե «մենք ինչ ենք եղել, և ինչ ենք արել»—բայց նա մեզ ցույց չէ տալիս թե «մենք ինչ պետք է անենք»[30]։

Գր. Արծրունին չէր հանդուրժում ժամանակի այն գրողներին, որոնք, հրապուրված հայ ժողովրդի անցյալով ու զբաղված լինելով այդ անցյալի ուսումնասիրությամբ, մոռացության են տվել նրա ներկա կյանքը, նրա առօրյա ցավերն ու հոգսերը։ Նա պահանջում էր, որ ժամանակի հայ գրողներն ու հրապարակագիրները լինեն ոչ թե քարոզիչներ, այլ հետազոտողներ, որ

27 Նույն տեղում։

28 Նույն տեղում։

29 Մշակ, № 48, XII, 1873։

30 Գրիգոր Արծրունի, Նշվ. աշխ., էջ 127։

նրանք մտնեն ժողովրդի մեջ, իմանան նրա տնտեսական խնդիրները, ներկայացնեն ազգի բարոյական պակասությունները։ Գրականության հիմնական նպատակը հասարակությանը իր պակասությունները ճանաչել տալն է։ Հրապարակախոսի կարծիքով դրան կարելի է հասնել, երբ գրողը հասարակությանը առաջարկում է նոր, կատարյալ գաղափարներ և ներկայացնում նրա կյանքի պակասությունները։ Այս առումով նա բարձր էր գնահատում Դիկենսին ու Դյումա-որդուն, Գոգոլին ու Պուշկինին, որոնք, չվախենալով ժամանակի արգելքներից, ներկայացրել են իրենց ազգերի կյանքը՝ առկա արատներով ու պակասություններով։

Ազգային լուսավորության ու մտավոր առաջադիմության կարևոր գործոններից մեկը Գր. Արծրունին համարում էր օրագրությունը։ Նրա համողմամբ Վենետիկում կամ Մոսկվայում հրապարակվող ամսագրերը, եվրոպական լուսավորության գաղափարները Հայաստանում թեև կարող էին որոշակի դաստիարակիչ նշանակություն ունենալ, բայց հեռու լինելով հայ աղդից, ի վիճակի չէին ներկայացնելու նրա խնդիրներն ու պահանջները։ Այս առումով Թիֆլիսում հրատարակվող պարբերականները համարելով հայ մտավոր կյանքի առաջադիմության երկրորդ կարևոր քայլը, նա կոչ էր անում բոլոր ջանքերը ներդնել հայ օրագրության գործը ավելի առաջ տանելու համար։ Հրատարակվող ամսագրերի խնդիրը պետք է լիներ «ազգային լրագրության և օրագրության մեջ ցրված, միմյանցից անկտպ, հում նյութերը միմյանց մեջ կապել, դասավորել, մշակել և նրանց վրա հիմնվելով, ընդհանուր տնտեսական, ազգագրական, ուսումնական խնդիր յուրացնել, լրագրության մեջ բոլոր զարթեցրած հարցերից ընդհանուր տեսություն անել»[81]։

Հաշվի առնելով այն փաստը, որ հայրենական պարբերական մամուլը դանազան շրջաններ անցնելով, ազգի համար նշանակալից մտավոր հող է պատրաստել, նա գտնում էր, որ Ալեքսանդրապոլ, Շուշի գավառական քաղաքներն էլ կարող են ձեռնամուխ լինել տեղական թերթերի հրատարակությանը։

Ամփոփելով շարադրվածը, կարելի է ասել, որ XIX դ. հայ լուսավորական մտքի ներկայացուցիչները համարձակորեն պայքարել են ազգը ֆեոդալական խավարի ու տգիտության շրջանակներից դուրս բերելու և եվրոպական առաջադիմության ուղիով տանելու համար։ Նրանք դրել են ազգային առաջադիմության բոլոր գործոնների՝ նոր գրական լեզվի ու գրականության, պատմագրության, կրթության և դաստիարակության, թատրոնի, արվեստի ու եկեղեցու գործունեության արմատական վերակառուցման հարցը։ Նրանց առաջադրած գաղափարները և դրանք ավանդելու մարտական ոգին ոչ միայն լայն արձագանք ունեցան հետագա շրջանի առաջադիմական մտքի ասպարեզում, այլև պարարտ հող նախապատրաստեցին հայ իրականության մեջ ինչ-որ չափով եվրոպական լուսավորության լավագույն եղանակների կիրառման ու լուսավորական հաստատությունների վերակառուցման համար։

ВОПРОСЫ ОБЩЕСТВЕННОГО ПРОГРЕССА В АРМЯНСКОЙ ПРОСВЕТИТЕЛЬСКОЙ МЫСЛИ XIX ВЕКА

А. П. КАРАПЕТЯН

Резюме

Передовые представители армянской просветительской мысли XIX века боролись за освобождение нации от феодального мракобесия и стремились вывести ее на европейский путь просвещения. Они ставили вопрос о коренной перестройке факторов национального прогресса. Выдвинутые ими идеи в дальнейшем не только получили широкое распространение, но и создали благодатную почву для использования положительных методов европейского просвещения.

81 Մշակ, № 2, I, 1873։